

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հուլիսի 8-ին, երեքշաբթի օրը, ժամը 20-ին, Հայոց Հայրապետն Իր շքախմբի անդամների հետ Մոսկվայից վերադարձավ Մայր Աթոռ՝ շուրջ երկու և կես ամիս տևած արտասահման կատարած Իր հովվապետական ուղևորությունից հետո:

Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհեցին **տ. Պարգև եպս. Գևորգյանը, տ. Անանիա աբդ. Արաբաջյանը** և ռուսաց պատրիարքարանի Արտաքին հարաբերությունների բաժնի վարիչի տեղակալ **տ. Խրիզոստոմ եպիսկոպոսը:**

Հայոց Հայրապետին դեպի Երևան բարի ճանապարհ մաղթեցին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Սարգիս Գասպարյանը** և ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Վ. Մակարցևը:**

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետի ժամանումը ողջունեցին և բարի գալուստ մաղթեցին Մայր Աթոռի դիվանապետ **տ. Արսեն եպս. Բերբերյանը, տ. Վահան, տ. Նարեկ, տ. Գևորգ** եպիսկոպոսները, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը, Արարատյան թեմի քահանայից դասը, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամներն ու հավատացյալների մի մեծ խումբ:

Հայոց Հայրապետին այստեղ մեծ ուրախությամբ դիմավորեցին նաև ամերիկահայ երիտասարդաց եկեղեցասեր կազմակերպության շուրջ 32 երկսեռ ուսանող անդամ-անդամուհիները՝ գլխավորությամբ **տ. Ներսես քհն. Ճեպեճյանի:** Ուսանողների այս խումբն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում և հայրենիքում՝ Հայոց Հայրապետի հրավերով:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեց և բարի գալուստ մաղթեց նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Սուրեն Հովհաննիսյանը:**

Այնուհետև Հայոց Հայրապետը, օրհնելով բոլոր ներկաներին, ավտոմեքենաների շարասյունով հանդիսավորապես առաջնորդվեց Մայր Աթոռ, որն այս առթիվ զարդարվել էր տոնականորեն:

Հայոց Հայրապետը զանգերի զվարթ ղողանջի ներքո, եկեղեցական թափորով, մուտք գործեց Մայր տաճար, ուր լուսարարապետ **տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը,** հանուն Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռի միաբանության և բոլոր ներկաների, սրտագին բարի գալուստ մաղթեց Նրան:

Վեհափառ Հայրապետն Իր պատասխան խոսքով ողջունեց բոլորին, անդրադարձավ արտասահման կատարած Իր ուղևորության հոգևոր, եկեղեցական, ազգային-հայրենասիրական արդյունքներին և հաղորդեց սփյուռքի հայության եղբայրական ողջույնները Մայր Աթոռի միաբանությանն ու հայրենի ժողովրդին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց Վեհարան, ուր «Պահպանիչ»-ով ավարտեց օրվա հանդիսությունը:

Բարի գալուստ Հայոց սիրելի Հայրապետին:

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ
ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ